

Արձանագրություն N2

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

29.10.2014թ. նիստի

Օրակարգ

1. Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի իրականացման գործընթացի քննարկում:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 23-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝

Ֆակուլտետի դեկան և գիտխորհրդի նախագահ Ս.Աբրահամյանը նիստը բացեց ամբողջ գիտխորհրդին տեղեկացնելով, որ որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցած դասախոսները պետք է հաջորդ մրցույթին ներկայացնեն համապատասխան վկայականներ: Մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Չուբարյանը նշեց, որ ֆակուլտետը գրավում է տասներեքերորդ տեղը համալսարանում, միջին կրեդիտը կազմում է մոտավորապես տասնհինգ տոկոս և անհատապես նշեց այն դասախոսների անունները, որոնք ոչ մի միավոր չեն հավաքել որակավորման բարձրացման դասընթացներից: Ա. Չուբարյանը հայտարարեց, որ դասախոսները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն պարտադիր դասընթացներին և հորդորեց ամբիոնի վարիչներին հիշեցնել դասախոսներին, որ որակավորման բարձրացման վարչություն ներկայացնեն իրենց հրատարակած աշխատանքները ցանկը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի իրականացման գործընթացի կատարման ընթացքը ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝

Ս. Աբրահամյանը նշեց, որ հավելյալ աշխատավարձի հետ կապված միավորների հաշվարկման խնդիրները լուծելու համար պետք է որոշակի վերահսկողություն հաստատել գործընթացի վրա, որը կարող է անել ֆակուլտետային միջամբիոնային հանձնաժողովը: Դեկանը առաջարկեց ԲՈՂ-ի ցուցակում գրանցված ամսագրերը գնահատել չորս բալով, մյուս ամսագրերում կամ ժողովածուներում զետեղվածները՝ երկու բալով: Նա նաև առաջարկեց, որ ֆակուլտետային հանձնաժողովը վերջում ստուգի ամբիոնների կողմից ներկայացված տվյալները: Հանձնաժողովում ամեն ամբիոնից պետք է ներկայացված լինի մեկ հոգի: Հանձնաժողովի պարտադիր անդամներ կլինեն դեկանի տեղակալ Լ. Կարապետյանը, արհկոմի նախագահ Ն. Հարությունյանը, մեթոդ խորհրդի նախագահ Ն. Հարությունյանը: Բացի այդ, դեկանատի կողմից տրվող տաս միավորը կհատկացվի միայն ամբիոնի վարիչների համապատասխան գրությունը ներկայացվելուց հետո:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել հավելյալ աշխատավարձի համար ներկայացվող հաշվարկները վերահսկող տաս անդամից կազմված հանձնաժողով կազմելու առաջարկությունը:

2. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Երաշխավորել բ.գ.թ., դոցենտ Մ. Ապրեսյանին՝ պրոֆեսորի կոչման դիմելու համար:
- Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հայցորդներ Վ. Հովհաննիսյանի և Ն. Զաքարյանի գիտական ղեկավար վերահաստատել Ա. Սեդրակյանին և Վ. Արսենյանին:
- Երաշխավորել Անգլերենի թիվ 1 ամբիոնի ասիստենտ Ա. Պապոյանին դոցենտի գիտական կոչման դիմելու համար:
- Երաշխավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի լաբորանտ Տ. Գյուրջյանին հեռակա ասպիրանտուրա ընդունվելու համար:
- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Ֆ. Փոլադյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Ս. Գասպարյանին:
- Հաստատել Գերմանական բանասիրության ամբիոնի հայցորդ Մանե Անանյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Յու. Գաբրիելյանին:
- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Գայանե Մուրադյանի դոկտորական ատենախոսության թեման և գիտական խորհրդատու նշանակել բ.գ.դ., պրոֆ. Սեդա Գասպարյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝

Գ. Մուրադյան

29 հոկտեմբերի 2014թ.